
ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմեց Մ. ՄԱՋՄԱՆՅԱՆ

29 JAN 2018
0107 141 62

Հ. Խ. Ս. Հ. ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ

№ 18 Հ Ե Ռ Ա Կ Ա Ո Ւ Ս Ո Ւ Ց Մ Ա Ն Գ Ր Ա Դ Ա Ր Ա Ն № 18

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԾՐԱԳԻՐ-ԱՌԱՋԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Կազմեց՝ Մ. ՄԱԶՄԱՆՅԱՆ

Բոլոր ժակույսեաների առաջին կուրսի
ուսանողների համար

ՈՒՍՈՒՑԻՉՆԵՐԻ ՎՈՐԱԿԱՎՈՐՄԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏԻ ՀՐԱՏԱՐԱԿԶՈՒԹՅՈՒՆ

Յ Ե Ր Ե Վ Ա Ն

1937

Խմբ. Մ. ՓԻՐՈՒՄՅԱՆ

Սրբադրե՛ջ ԳԱՐ. ՀԱՅՈՒՅԱՆ

ՀՈԳԵՐԱՆՈՒԹՅՈՒՆ

Ծրագիր-առաջադրութիւն հեռակա մանկավարժական քա-
ռամյա և յերկամյա ինստիտուտների բոլոր ֆակուլտետ-
ների ուսանողների համար:

Ամբողջ կուրսը մշակվում է ուսման առաջին տարում:

Ն Ա Խ Ա Ր Ա Ն

Հոգերանության կուրսի լիակատար ուսումնաւիրու-
թյունն ինքնուրույն կերպով բախականին համառ աշխա-
տանք և պահանջում ուսանողից:

Համապատասխան դասագիրք չլինելու պատճառով,
մենք ի վիճակի չենք մեր ուսանողներին այնպիսի դասա-
գիրք առաջարկելու, վորտեղ լիակատար ու սպասիչ կեր-
պով արվի հոգերանության մարքսիստական դասընթացը:
Դեռ ավելին՝ վոչ միայն չկա մեր պահանջներին համա-
պատասխանող դասագիրք, այլև իրեն՝ հոգերանության վե-
րաբերող մի շարք կոնկրետ մասնագիտական հարցեր,
մարքսիստ-լենինյան սկզբունքներին համապատասխանող
իրենց բացատրութիւնը դեռ չունեն: Հրապարակում յեղած
դասագրքերը խիստ միակողմանի յեն և լի աչքի ընկնող
սխալներով: Յեղած դասագրքերից ամենահաջողը համար-
վում է Ռուբինշտեյնի «Հոգերանության հիմունքները» գիր-
քը, վոր նույնպէս ազատ չէ մի շարք իրականացման բնութի
սխալներից: Բացի դրանից, Ռուբինշտեյնի գիրքը առանձին և,
զրկւած ասպիրանտների համար և խիստ դժվարամարտ է:
Ինչ վերաբերում է հայերեն լեզվով յեղած գրականու-

Գլավկա կ—4482

հրատ. 3

պատվ. 5

ախրած 1000

Հանձնված է արտադրութեան 3 հունվարի 1937 թ.

Ստորագրված է ապրիլ 20 հունվարի 1937 թ.

Ուսուցիչն էր վերականգնման ինստիտուտի տպարան,

Յերենի Մարքսի փողոց 17

11-280169

թիւսն, պետք է ասել հետեւյալը: Մի քանի տարի առաջ հեռակա մանկավարժական ինստիտուտի կողմից լույս ընծայված Գ. Եղիլյանի առաջադրութեանը, վոր փաստորեն ուստական համապատասխան գրականութեան զօգույնն պատճենն է միայն, լի յի բազմաթիւ սխալներով, հակադիտական է, մարքսիստական հոգեբանութեան հետ վոչ մի կապ չունի և յերբեմն նույնիկ ֆեաաակար գրութեանը և պարունակում: Այդ իսկ պատճառով Գ. Եղիլյանի առաջադրութեանները բոլորովին ոգտադործել չի կարելի: Նույն ինստիտուտի կողմից հրատարակված՝ Մ. Մազմանյանի կազմած հոգեբանութեան առաջադրութեանները հապճեպութեան կնիքն են կրում իրենց վրա և պարունակում են մի շարք վոչ ճիշտ գրութեանը ու սխալներ: Այդ իսկ պատճառով ել Մազմանյանի կազմած առաջադրութեանները հիմնականում հանճարարի չեն:

Ինչ վերաբերում է Կորնիլովի «Հոգեբանութեան» դասագրքին», վորի թարգմանութեանը Գ. Եղիլյանի խմբագրութեամբ լույս ընծայեց Պետհրատը, պետք է ոգտադործելի համարել միայն այլ աղբյուրների բացակայութեան պատճառով: Մշակելիս յերբեք չպետք է մոռանալ, վոր Կորնիլովի դասագրքի, հատկապես նրա առաջին մասի վրա զգացվում է այսպես կոչված մանկաբանութեան ֆեաաակար աղդեցութեանը, վորից վոչ մի կերպ չի կարողացել ազատվել Կորնիլովը: Կորնիլովի գրքից կարելի յի ոգտադործել միայն հոգեկան առանձին ֆունկցիաներին վերաբերող գլուխները: Կորնիլովի գրքի քննադատութեանը կտրվի առկա պարագմունքների ընթացքում: Այստեղ միայն համարուտակի պետք է նշել հետեւյալը: Կորնիլովը խոսելով հոգեբանութեան մեթոդների մասին՝ հասուկ ուշադրութեան առարկա յի դարձնում տեսուրի մեթոդը և հատկապես ընդգծում է Բինե-Սիմոնի «մեաուրական շկայաչի» տեսուրի սխտեմը: Կորնիլովը նույնիսկ գովաբանութեամբ ու անվերապահորեն և ընդունում Բինե-Սիմոնի հակադիտական, հակամարքսիստական, բուրժուական դասակարգային տեսուրը, և նույնիսկ չի ընդդոմ աչն հանգամանքը, վոր Բինե-

յի հետադոտութեանները փաստորեն հանգում են հակահեղափոխական ֆեաաակար յեզրակացութեանների, վոր ինքը՝ Բինեն «հոգեբանորեն» աշխատում է հիմնավորել բուրժուական դասակարգի գերիշխանութեանն աշխտտովոր դասակարգի վրա: Այսպես՝ խոսելով իր հետադոտութեանների աղյուսնքների մասին՝ Բինեն տաուացիորեն գըրում է հետեւյալը. «Մեր հետադոտութեանները, ինչպես և ուրիշ շատերի հետադոտութեանները ցույց տվին, վոր աղքատ դասակարգի յերեխան ունի փոքր հասակ, փոքր քաշ, փոքր գլուխ, փոքր մկանային ուժ, քան հարուստ դասակարգի յերեխան. . . նա հաճախ հետ է մնում իր պարագմունքների մեջ»:

Յուր տեսուրի դասակարգային նպատակների մասին Բինեն հետեւյալն է ասում.

«Պահպանելով աչգ հախազողութեանը (այսինքն) շուկելով յերեխաների միջից «ընտրյալներին»—ճանութութեանը Բուրնովինն և)՝ մենք անպայման կքչացնենք գըրգոհների և թշվառների թիվը»

Այս տողերում պարզ յերևում է «գիտական» Բինեյի բուրժուական-ոեակցիոն դեմքը:

Գոհելի կերպով տալով ամբողջական մարդու եյութեանը, վոր Մարքսի խոսքերով տաված՝ «հասարակական հարաբերութեանների հանրադումարն» և ներկայացնում իրենից, նա արհեստականորեն, կեղծելով Մարքսին՝ սոցիալականը համարում է միայն աուաշտահերթ: Մարդու վարքը բացատրելու գործում հիմնական տեղերից մեկը տալով ոեակցիոն գիտական, ըստ եյութեան. ֆաշիստական յեզրակացութեանների հանգով՝ Կրեչմերի կոնտիտուցիայի (որգանիզմի բիոլոգիական հատկութեանների հանրագումարը Կրեչմերի կողմից կոչվում է կոնտիտուցիա)՝ ուսմունքին՝ Կորնիլովը տիպիկ բուրժուական աչգ գիտականի ոեակցիոն ուսմունքը միայն «վիճելի» յի համարում:

Կորնիլովի դասագրքի Յ-րդ գլուխը, վորտեղ խոսում է հոգեբանութեան մեթոդների մասին, բոլորովին չպետք է մշակել: Այս գլխումն է, վոր Կորնիլովը գովասանք է կարդում հակադիտական բուրժուական տեսուային մեթոդին:

Այս ծրագիր-առաջադրութիւնը նախադժային բնույթ ունի: Աշտուհները և լրացումները կկատարվին առկա պարագամուքների ընթացքում:

Ամբողջ ծրագիրը փաստորեն բաժանվում է չորս մեծ բաժինների: Առաջին բաժինը նվիրված է հողերանության առարկային, նրա համառոտ պատմութեանը, մեթոդներին ու խնդիրներին: Այս բաժնում հեռակայողը պետք է պարզի հողերանության առարկան և մեթոդները ղեկավարելու մատերիալիզմի տեսանկյունից: Վորպեսզի ուսանողը կարողանա առարկայի ելութեան բովանդատելն քարզ բացատրութեան ըմբռնել առանց նախապես ծանոթ լինելու հողերանութեան հետ, անհրաժեշտ է կատարել մի փոքրիկ եքսկուրսիա հողերանութեան պատմութեան ասպարիզում: Առանց մանրամասնութեանների հետեից ընկնելու, ուսանողը պետք է իր ուշադրութեանը կենտրոնացնի մի հիմնական թեղի վրա. դա պսիխոֆիզիկական պրոբլեմն է իր պատմական զարգացման մեջ: Հիմնականն այն բանն պարզ պատկերացումն է, թոր հողերանութեան, իբրև գիտութեան, շատ դանդաղ զարգացման պատճառներից ամենահիմնականը պետք է համարել այն, թոր մինչ մարքոյան հողերանական է թոչ մի սխտեմ չկարողացավ լուծել պսիխոֆիզիկական պրոբլեմը: Կոնկրետ կերպով ծանոթանալով այդ սխտեմների հիմնական սկզբունքների հետ՝ ուսանողը պարզ կը պատկերացնի, թոր պսիխոֆիզիկական պրոբլեմի միակ ճիշտ գիտական լուծումը գիտելիութիւնական մատերիալիստական մոնիստական լուծումն է:

Հաճախ մարքոստական ցիտոտոններն ազավազելով աշխատել են ապացուցել մարքոսիզմի հետ թոչ մի առնչութեան չունեցող մտքեր (Կորնիլովի ռեակտորգիան, Ֆրեյթսի չունեցող մտքեր (Կորնիլովի ռեակտորգիան, Ֆրեյթսի գիզմը Լուրիայի մոտ, մոտածրութեան և խոսքի սաղմնաբանական արմատների մեխանիստական հասկացողութեանը):

Թյունը վիզոտակու կողմից, Բեխտերյեվի ռեֆլեքսոլոգիան և այլն): Հատկապես պետք է նշել այն, թոր մանկաբանական ազավազումներն իրենց արձագանգն են գտել հողերանութեան մեջ և խորհրդային հողերանները դեռ հսկայական աշխատանք ունեն մարքոստական հողերանութեան կառուցման և նրան զտարյուն դարձնելու գործում:

Հատուկ ուշադրութեան պետք է դարձնել հողերանութեան մեթոդների վրա: Յեթե իդեալիստական բուրժուական հողերանութեանը ժխտում է հողու գիտական, որյեկտիվ ուսումնասիրութեանը և սահմանափակվում է սուբյեկտիվ, ինքնադիտողական մեթոդով, յեթե բիհիվիտրիզմը բոլորովին հրաժարվում է հողեկան ներքին պրոցեսների ուսումնասիրութեանից, այն փոխարինելով վարքագիտութեամբ, մարդը մեքենայի վերածելով, խորհրդային հողերանութեանը պետք է հողեկան կյանքի ներքին, սուբյեկտիվ յիւրույթներն ուսումնասիրել նրանց կենսազործումից յեկնելով, առաջնորդվելով մարդու պրակտիկ գործունեյութեանից, յիւրելով Մարքսի այն դրութից, թոր միայն աշխատանքային պրոցեսում հնարավոր է կարգալ մարդու հողին այնպես, ինչպես մենք կարգում ենք բաց արված գիրքը: Իհարկէ՝ սա չի բացատում ինքնադիտողութեան մեթոդի ոգաւործումն իբրև ոժանդակ մեթոդի: Այս բաժնում պետք է հատուկ ուշադրութեան դարձնել հակադիտական, այսպես կոչված տեստային մեթոդի քննադատման վրա, թորի գործադրումն այնքան վնաս հասցրեց մեր ուսուցման գործին:

Ծրագրի յերկրորդ մեծ բաժնին ամբողջապես բղխում է դիալեկտիկական մատերիալիզմի հիմնական սկզբունքից՝ զարգացման սկզբունքից: Պարզաբանելով զարգացման յերկու կոնցեպցիաներն ըստ Լենինի՝ պետք է լրիվ պատկերացնել հողու դիալեկտիկական մատերիալիստական զարգացման հիմունքները: Այս բաժնի յենթամասերից մեկը նվիրված է հողու զարգացմանը բիոլոգիական պրոցեսի եվոլյուցիայի ընթացքում (կենդանիների հողեկան զարգացումը), և մյուսը՝ մարդկային հողու պատմական զարգացմանը: Այս բաժնի վերջին յենթաթեմայում քննվում է

հոգու զարգացման օրնոցը, աշխնքն՝ մարդկային կյանքի ինդիվիդուալ զարգացումը, յերեխայի և անչափահասի հոգեկան կյանքի հիմնական սրենքները:

Այս բաժնում պետք է արմատական քննադատութեան յենթարկել մանկաբանութեան այն հիմնական «որենքը», ըստ վորի «յերեխաների ճակատագիրը ֆատալիստորեն պայմանավորվում է կենսաբանական և սոցիալական գործոններով, Ժառանգականութեան և ինչ վոր անփոփոխ» միջավայրի ազդեցութեամբ: Խորապես ռեակցիոն այդ «որենքը» ազդող հակասութեան մեջ է գտնվում մարքսիզմի և սոցիալիստական շինարարութեան վողջ պրակտիկայի հետ, վորը մարդկանց հաջողութեամբ դաստիարակում է սոցիալիզմի վեզով և վերացնում է կապիտալիզմի միացուկներն եկոնոմիկայում և մարդկանց գիտակցութեան մեջ» (Համ. Կ(բ)ի վորոշումից):

Հոգու պատմական զարգացման յենթաբաժնում կենտրոնական տեղ պետք է գրավի գիտակցութեան զարգացման ուսումնասիրութեանը, վոր լիակատար կերպով կախում ունի հասարակական աշխատանքի ձևից: Հատկապես այս մասը մշակելիս հարկավոր է վորոշակիորեն հրաժարվել զանազան մեխանիստական կոնցեպցիաներից, վորոնք աշխատանքի դերը գիտակցութեան զարգացման մեջ բղխեցնում են աշխատանքային պրոցեսից և վոչ թե այն հարաբերութեաններից, վոր մարդը մտնում է բնութեան և մարդկանց հետ՝ աշխատանքային պրոցեսում, մտանայով ինստանցիաների դերը: Կենդանու հոգու զարգացման յենթաթեման իր մեջ ներփակում է խորհրդային հոգեբանութեան կարևորագույն սկզբունքը—զարգացման սկզբունքը, վորը հետագայում խիստ կերպով անցկացվում է ծրագրի բոլոր կոնկրետ բաժիններում: Այս բաժնում հատուկ ուշադրութեան պետք է դարձնել հոգեկան զարգացման պատմական պրոցեսի վրա, հոգեկան զարգացման վրա, իբրև նոր վորակների առաջացում՝ հոգեկան ցածր վորակական ձևերի քանակական աճման հիման վրա:

Սկզբնիկ Պավլովի պայմանական ռեֆլեքսների ուսումնքի հետ համապատասխան ծանոթանալու շնորհիվ, հռակայողը վորոշ դադափար ձեռք կբերի կենդանիների

բարձր ներվային համակարգութեան գործունեութեան օրինաչափութեանների մասին:

Ծրագրի յերրորդ և ամենամեծ բաժնի ուսումնասիրման մասին պետք է ասել հետևյալը. հոգեկան ֆունկցիաները հոգեբանութեանն ուսումնասիրում է այնպես, ինչպես նրանք անմիջականորեն արտահայտվում են մարդկային պրակտիկայում, իրենց վողջ խորագույն փոխադարձ կապվածութեամբ և իրենց լրիվ պայմանավորվածութեամբ այն պատմական դարաշրջանի հետ, վորի մեջ զարգանում է գիտակցութեանը, վորը կեցութեան արտացոլումն է: Հետևաբար չի կարելի հոգեկան ֆունկցիաներն առանձանել միջավայրից: Հատկապես ընդունման պրոցեսը պետք է վերցվի մտածողութեան բոլոր առանձնահատկութեանների հետ կապակցված: Ըմբռնման ակտիվ բնույթը պետք է բացատրել մարդկային պրակտիկ գործունեութեամբ: Մտածողութեան ու խոսքի պրոբլեմին շատ մեծ տեղ է տրվում: Նշելով լեզվի և մտածողութեան գենետիկական արմատների նույնը լինելը՝ պետք է ընդդէմ նրանցից ամեն մեկի զարգացման առանձնահատկութեանները, ինչպես և՛ նրանց միասնութեանը՝ խոսքն իբրև մտածողութեան գործիք: Խոսքի և մտածողութեան զարգացումը պետք է ուսումնասիրվի և՛ նրանց պատմական զարգացմամբ, և՛ նրանց օնտոգենեզով (տարիքային, անհատական զարգացմամբ):

Մանկավարժական պրակտիկայի հիմնական պրոբլեմի՝ ուշադրութեան, ըմբռնման և մտապահութեան խնդիրները պետք է հատուկ ուշադրութեան առարկա դառնան:

Հատուկ ուշադրութեամբ հարկավոր է մշակել «Կամք» գլուխը:

Պետք է պարզաբանել կամային վորակների նշանակութեանը մարդկային ամեն տեսակի գործունեութեան համար: Կամքի դաստիարակութեան պրակտիկ հարցերի մասին խոսելիս, պետք է յիշել այն դրութից, վոր միայն մեղ մոտ, մասնավոր սեփականութեան կարգերից ազատված սոցիալիստական հասարակարգում է հնարավոր ուժեղ կամքի դաստիարակումը: Խորհրդային հասարակակարգի առօրյան, սոցիալիստական աշխատանքի ձևերը դաստիարակում են բազմաթիվ հերոսներ:

Հոգեկան ֆունկցիաների հոդարաշխմած ուսումնասիրութիւնը չպետք է ստիպի հեռակայողին մոտանալ, վոր խորհրդային հոգեբանութիւնն ուսումնասիրում է բարդ հոգեկան պրոցեսներն իբրեւ մի ամբողջութիւն, իբրեւ ֆունկցիաների գիտելիութեական միասնութիւն: Հետեւաբար և հոգեբանութիւնը պետք է ուսումնասիրի հոգեկան կյանքում մարդկանց մինչև գոյութիւն ունեցող տարրերութիւնները: Ծրագրի չորրորդ մեծ բնօրինն զբաղվում է տեմպերամենտի (խառնվածք), բնավորութեան և անհատի տարիքային առանձնատկութիւնների ուսումնասիրութեամբ:

Ինչպես սկզբում ընդգծեցինք, հեռակայողի աշխատանքի դժվարութիւնն այն է, վոր մենք չենք կարող նշել և վոչ մի դասադիրք, վորը, թեկուզ և հիմնական գծերով, ընդգրկէր հոգեբանութեան վոչմ դասընթացը: Յեւ չհիմնական սկզբունքային հարցը հոգեբանութեան առարկայի մասին ու մի շարք առաջնակարգ ու մասնակի բնութիւն հարցեր (Ֆաշիստական հոգեբանութեան հակազիտական սխառմը, հոգու պատմական զարգացումը, մտածողութիւն, կամք, ակադեմիկ Պավլովի բացատրութիւններն անհատական տարրերութիւնների մասին և այլն) լուսարանված չեն սխառմատիկ և վորակյալ կերպով: Հեռակայողը պետք է ինքը հավաքի վորոշ կտորներով զանազան տեղեկութիւններ:

Այս աշխատանքը մեծ ջանասիրութիւն ու նախաձեռնութիւն է պահանջում: Պետք է աչքաթող չանել և այն հանդամանքը, վոր ուսանողների վորոշ, կարելի չէ ասել՝ մեծագույն մասը կամ լիովին չի տիրապետում ռուսաց լեզվին, կամ յերբեմն ել բոլորովին չի կարողանում ոգտվել ռուսական աղբյուրներից: Այս բացը միայն մասամբ կարելի չէ վերացնել կոնֆերանսների ընթացքում:

Ինչ վերաբերում է կոնտրոլ զբաղմ աշխատանքին, ապա հեռակայողները պետք է ինկատի ունենան վոր, ուսանողից պահանջվում է միայն մի զբաղմ աշխատանք:

Գրավոր աշխատանք չներկայացնողները չեն կարող քընսվել հոգեբանութեանից: Գրավոր աշխատանք կատարելիս պետք է խուսափել ընդհանուր խոսքերից ու ճառերից: Զը պետք է աշխատել մի զբաղմ աշխատանքում խոսել ամեն ինչի մասին և ինչ վոր գիտես գրել: Ուսանողից պահանջվում է վերցնել կոնկրետ բնութիւն հետեւյալ թեմաներից մեկն ու մեկը և զբա շուրջը գրել, թեմաներն են. 1) հիշողութեան առանձնատկութիւնները տարրական դպրոցի աշակերտի մոտ, 2) «մեծի և փոքրի զգացմունքները», 3) «յերեխայի յերեկայութիւնը», 4) «յերեխայի մտածողութեան բնութիւնը», 5) «վոր դեպքում ենք լավ ըմբռնում», 6) «կամքի դաստիարակութիւնը և ուսուցիչը», 7) «անհատական տարրերութիւնները վորեւ կոնկրետ դասարանի աշակերտների մեջ», 8) «հիշողութեան դաստիարակութիւնը»: Թեմաներն անհրաժեշտ է մանրակրկիտ կերպով մշակել, ոգտադործելով ուսուցչական աշխատանքի փորձն ու գիտողութիւնները: Ճառի բնութիւն ունեցող աշխատութիւնները հետ կվերադարձվեն. կոնտրոլ զբաղմ աշխատանք ներկայացնելու ժամկետ նշանակվում է ապրիլի 15-ը: Մշակած գրակնութեան համար պետք է անպայման կոնսուլտել կազմել և այդ կոնսուլտիւն ամառային առկա պարագմունքների ժամանակ ներկայացնել դասախոսին:

Հիշելով Մարքսի այն թեզիսը, վոր մենք հասկանալով աշխարհը՝ պետք է այն փոխենք, և ամուր կերպով յուրացնելով այն, վոր գիտական տեսութիւնը կարող է կենդանի լինել միայն այն ժամանակ, յերբ նա ամուր կերպով կապված է պրակտիկայի հետ, ուսանող-ուսուցիչը ձգտելով ձեռք բերել ճիշտ սկզբունքային դրութիւններ հոգեբանութեան ասպարիզում կոնկրետ հոգեբանական մատերիալն ուսումնասիրելիս պետք է միշտ իր սովորածը կապի ամենորշա մանկավարժական գործունեութեան հետ, նա զբաղողականների վրա կատարվող գիտողութիւնների միջոցով պետք է ստուգի ստացած տեսական գրութիւնը և ուսուցման աշխատանքներում կիրառի հոգեբանութեան որեւէ ների ուսումնասիրութիւնից հանված պրակտիկ յեղրակացութիւններ:

Հոգեբանություն ծրագրերն ու մշակման ընդհանուր պլանը հետևյալն են.

Թ Ե Մ Ա Ն Ե Ր		Ժամեր
1-ին. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ		10 ժամ
1. Համառոտ, պատմությունը	.	6 ժամ
2. Հոգեբանության առարկան	.	2 »
3. Հոգեբանության մեթոդները	.	1 »
4. Հոգեբանության խնդիրները	.	1 »
2-րդ. ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՀԻՄՈՒՆՔՆԵՐԸ		15 ժամ
1. Հոգին դիալեկտիկական մատերիալիստական զարգացման կոնցեպցիայի լույսի տակ	.	2 ժամ
2. Կենդանու հոգեկան զարգացումը: Ներվային համակարգությունը	.	8 »
3. Մարդկային գիտակցության պատմական զարգացումը	.	3 »
4. Յերեխայի հոգեկան զարգացումը	.	2 »
3-րդ. ՈՒՍՄՈՒՆՔ՝ ԱՆՀԱՏԻ ՅԵՎ ՆՐԱ ՀՈԳԵԿԱՆ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ		45 ժամ
1. Ուսմունք տնտեսի մասին	.	4 ժամ
2. Զգայությունը և ըմբռնում	.	6 »
3. Հիշողություն	.	4 »
4. Ուժք և մտածողություն	.	12 »
5. Յերեխայություն	.	4 »
6. Զգացմունք կամ եմոցիաներ	.	4 »
7. Ուշադրություն	.	2 »
8. Հետաքրքրություններ	.	3 »
9. Կամք	.	6 »
4-րդ. ԱՆՀԱՏԻ ԻՆԴԻՎԻԴՈՒԱԼԻՍՏԱԿԱՆ—ՏԻՊԻԿԱԿԱՆ ՅԵՎ ՏԱՐԻՔԱՅԻՆ ԱՌԱՆՁՆԱՀԱՏԱԿՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ		6 ժամ
Ը ն դ ա մ ե ն ը		76 ժամ

ԱՌԱՋԻՆ ԲԱԺԻՆ

ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ, ՆՐԱ ՊԱՏՄՈՒԹՅՈՒՆԸ, ՄԵԹՈԴՆԵՐՆ ՈՒ ԽՆԴԻՐՆԵՐԸ

1. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ԱՌԱՐԿԱՆ

Հոգեբանությունն իրրե գիտություն՝ հոգեկան պրոցեսների որինաչափությունների մասին: Հոգին բարձր կազմակերպված մատերիալի հատկություն «Հոգին, գիտակցությունը և այլն մատերիալի (այսինքն՝ ֆիզիկականի) բարձր արտադրանքն (պրոդուկտ) է, այն մատերիալի հատուկ կտորի ֆունկցիան, վրը կոչվում է մարդու ուղեղ».

«Զգայությունը, միտքը, գիտակցությունը հատուկ կերպով կազմակերպված մատերիալի բարձր արտադրանքն է» (Լենին):

Հոգեկանի և ֆիզիկականի միասնության մարքս-լենինյան ուսմունքը: Հոգեկանի և ֆիզիկականի հարաբերությունների բուրժուական իդեալիստական տեսությունների քննադատությունը. նույնության տեսությունը, պիլիոֆիզիկական զուգահեռականության տեսությունը, հոգեֆիզիկական փոխազդեցության տեսությունը: Համառոտ տեսություն՝ բարձր ներվային համակարգության ժամանակակից տեսություն մասին: Մարդկային հոգու վորակական առանձնահատկությունները: Մարդու գիտակցությունն իրրե նրա հասարակական կեցության արտացոլում: Հոգեբանություն համառոտ պատմությունը՝ կապված փիլիսոփայության պատմության հետ: Հոգեբանության ձևավորումն իրրե եքսպրիմիստալ գիտություն, արդյունաբերական կապիտալիզմի դարաշրջանում տեխնիկական-տնտեսական առաջընթացման և բնական գիտությունների զարգացման ազդեցության տակ: Ժամանակակից բուրժուական հոգեբանության վիճակը—ճգնաժամը: Իդեալիզմի և մեխանիցիզմի պայքարը բուրժուական հոգեբանության մեջ: Հոգեբանություն ֆաշիզացիան: Որոհրդային հոգեբանության պատմությունը: Մարքս-լենինյան հոգեբանության կառուցումը:

2. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵԹՈԴՆԵՐԸ

Ինքնադիտողականություն, որ յեկտիվ դիտողականություն, եքսպերիմենտ, համեմատական գենետիկական մեթոդ, Տեստային՝ բուրժուական հակադիտական մեթոդի քննադատությունը: Հետադոտությունների ժամանակ հոգեբանական մեթոդների կիրառման սահմանները:

3. ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՀԻՄՆԱԿԱՆ ԳՈՐԾԱԿԱՆ ԽՆԴԻՐՆԵՐԸ

Դաստիարակության ու աշխատանքի ուսցիտնալիզացիան իբրև հոգեբանական պրակտիկայի հիմնական ասպարեզներ: Բուրժուական մանկավարժական հոգեբանության քննադատությունը. մանկավարժական հոգեբանության հիմնական խնդիրները, Համկ(բ) Կ Կենտկոմի՝ զպրոցի մասին՝ հանած վորոշումների հիման վրա: Հոգեբանության կիրառումը մարդկային գործունեությունից աշխատանքներում: Դասական հոգեբանություն, բժշկական հոգեբանություն, սեկլամի հոգեբանություն և այլն:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑԱՆՈՒՄՆԵՐ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ԱՅՍ ԳԼԽԻ ՀԱՄԱՐ

Ուսումնասիրելիս նպատակահարմար կլինի ծրագիրը բաժանել յերկու մասի: Ավելի լավ է սկսել անմիջապես հոգեբանության պատմությունից:

Հոգեբանությունից պատմությունից մասին հեռակայողը համառոտ տեղեկություններ կարող է գտնել պրոֆ. Կորնիլովի հոգեբանությունից դասագրքի առաջին գլխում: Այդ նույն գրքի 2-րդ գլխում հեռակայողը կատանա խիտ հակիրճ ու ընդհանուր տեղեկություններ պահիտ-ֆիզիկական պրոբլեմի մասին: Յեթե հնարավոր լինի գտնել Ն. Դորրինի «հոգեբանությունից ներածություն» ուսեսերեն գիրքը (յերես 9—15) կարելի չե ոգտագործել:

Ավելի խորն ուսումնասիրել ցանկացողներին հանձնարարվում է պրոֆ. Ռուբինշտեյնի «Հոգեբանությունից հիմունքները» ուսեսերեն գիրքը 1935 թ. հրատարակություն: Ճիշտ է՝ Ռուբինշտեյնի աշխատասիրությունը բավականին բարդ է ու դժվար, բայց ուսեսերենին տիրապետող ուշիմ ուսանողը կարող է այդ դժվարությունները հաղթանարել:

Պատմություն ուսումնասիրությունից հետո, ուսանողը պետք է անցնի մեթոդների ուսումնասիրմանը: Այս գլխի համար պետք է ոգտագործել պրոֆ. Դորրինի «Հոգեբանությունից ներածություն» գիրքը և պրոֆ. Ռուբինշտեյնի «Հոգեբանությունից հիմունքները» աշխատասիրությունը: Տեսուերի մասին յեղած նյութը չպետք է մշակել:

Հարցեր՝ Իրկնողությունից իմֆնսուզման համար

1. Հոգե-ֆիզիկական պրոբլեմի դիալեկտիկական-մատերիալիստական լուծումը:

2. Հոգեբանությունից պատմական զարգացման հիմնական ետապները: Ռացիոնալիստական հմպիրիստական և որյեկտիվ հոգեբանությունից բնորոշումը:

3. Հոգեբանությունից առարկան:

4. Հոգեբանությունից հիմնական մեթոդները:

ԶԱՐԳԱՑՄԱՆ ՊՐՈԲԼԵՄԸ ՀՈԳԵԲԱՆՈՒԹՅԱՆ ՄԵՋ

Հոգե-ֆիզիկական պրոբլեմի մատերիալիստական լուծումը նշում է հոգեկան վորակի պատմականորեն ապելի ուշ ժամանակում առաջ յեկած լինելու խնդիրը: Հակառակ մետաֆիզիկական մատերիալիզմի ներկայացուցիչների կոնցեպցիայի, ըստ վորի յերևույթները պետք է ուսումնասիրել անշարժ, քարացած դրությունից մեջ, մեկը մյուսից անկախ և հաջորդաբար, դիալեկտիկական մատերիալիզմը պահանջում է յերևույթներն ուսումնասիրել իրենց աճման, զարգացման ու կործանման պրոցեսում, յերևան հանելով ալյալ իրի կամ առարկայի պատճառակցական կապակցությունների ամբողջությունը:

«Դիալեկտիկական մեթոդն ասում է, վոր կյանքը հարկավոր է դիտել հենց այնպես, ինչպես նա իրականում գոյություն ունի: Կյանքն անընդհատ շարժման մեջ է գտնվում, ուրեմն մեր պարտքն է դիտել կյանքն իր շարժման մեջ, քայքայման ու ստեղծման մեջ: Ո՛ւր է գնում կյանքը, ինչն է ծնվում կյանքում, ինչն է քայքայվում և ինչն է ստեղծվում—անա հարցեր, վորոնք պետք է առաջին հերթին հետաքրքրեն մեզ...» (Ստալին):

Յեղեկելով զարգացման դիալեկտիկական կոնցեպցիայից՝ հեռակայողը պետք է պարզի բխլովիական զարգացման այն ճանապարհը, վորի ուշ շրջանն է հանդիսանում հոգեկան վորակի առաջացումը: Բաժանելով կենդանիների հոգեկան զարգացումը յերեք վորակի (բնազդ, բնազդ գոմարած վարժություններ՝ բարձր կենդանիների մոտ և պլամային կյանքի տարրեր՝ մարդանման կապիկների մոտ), մշակող ընկերները պարզ գաղափար կկազմեն բխլովիական զարգացման այն աստիճանների մասին, առանց վորի կապկանման մարդը չի կարող աշխատելու ընդունակություն ձեռք բերել: Այս խնդրի պարզաբանումից հետո միայն պետք է անցնել մարդու գիտակցության, իբրև առանձնահատուկ վորակի, ուսումնասիրմանը, նշելով նրա պատմական պրոդուկտ լինելու հանգամանքը: Ընդգծելով, վոր ամենախելացի կենդանին անգամ գերի յե իր զգայաբաններին, իր տեսողաշտին, պետք է պարզ պատկերացնել մարդկության պրակտիկայի և այդ պրակտիկայի արտացոլման—գիտական մտածողության ամենակարևոր գերը՝ մեր գգայությունների ուժը և ծավալը բազմապատկելու, հաղարապատկելու ու ամենակարող դարձնելու գործում:

1. ՀՈԳՈՒ ԶԱՐԳԱՑՄԱՆ ՈՐԻՆԱԾԱՓՈԽՅՈՒՆՆԵՐԸ

Հոգու զարգացման ուսմունքը զարգացման յերկու հիմնական կոնցեպցիաների լույսի տակ (ըստ Լենինի):

2. ԿԵՆԴԱՆԻՆԵՐԻ ՀՈԳԵԿԱՆ ԶԱՐԳԱՑՈՒՄԸ

Վարքի տարրական ձևերի ֆիլոգենետիկ զարգացման ուսմունքը: Գրողունակություն: Տրոպիզմներ: Լյորի մեխանիստական զուլթների քննադատությունը:

Բնազդներ. նրանց տեսակի փորձով պայմանավորվելու և ժառանգապես փոխանցվելու հանգամանքը: Բնազդների նպատակահարմարությունը կենդանական աշխարհի գոյության կովի համար և այդ նպատակահարմարության սահմանափակվածությունը կոնկրետ սիտուացիայով: Բնազդները մարդկային վարքի հիմք դարձնող հակագիտական տեսությունների քննադատությունը: Հոգեկան զարգացման

ավելի բարդ աստիճանը—բնազդ, գոմարած վարժություններ: Հմտությունները կենդանիների մոտ: Հմտությունների առաջացման տեսությունը: Վարժողության որենքները: Հմտությունների առաջացումը Պավլովի պատմական ոեֆլեքսների ուսմունքի լույսի տակ: Այն տեսությունների (բինեփիլոգմալայն) քննադատությունը, ըստ վորոնց մարդու վարքը գուրկ է գիտակցական բնաշխից և ամբողջովին մեխանիկական վարժությունների արդասիք և:

Կյոլերի փորձերը կապիկների վրա: Կապիկների վարքի խելացի բնույթը: Նրանց վարքի խելացիության աստիճանը և սահմանները:

3. ՄԱՐԴՈՒ ԳԻՏԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Մարդկային հոգեկան-գիտակցական պրոցեսների սոցիալ-պատմական ծագումն ու այդ պատմական պրոցեսներին յենթակա լինելը, «վոչ թե մարդկանց գիտակցությունն է վորոշում նրանց հասարակական կեցությունը, այլ նրանց հասարակական կեցությունն է վորոշում նրանց գիտակցությունը» (Մարքս): Հոգու պատմական զարգացման անտեսումը մեխանիստական և իդեալիստական կոնցեպցիաներում: Հոգու բխլովիզացիան: Նրանց մոտ բխլովիական պրոցեսների նշանակությունը մարդկային հոգու զարգացման մեջ:

Գիտակցությունն իբրև մարդու հարաբերություն շրջակա միջավայրի հետ. «իմ հարաբերությունն իմ միջավայրի հետ հանդիսանում է իմ գիտակցությունը» (Մարքս): Աշխատանքի դերը կապիկ մարդայնացման և գիտակցության առաջացման մեջ: Մարդու գիտակցությունը և նրա վորակական տարրերությունները բարձր կենդանիների մասվոր կյանքից: Հարաբերությունների ստեղծումը հասարակական աշխատանքի պրոցեսում՝ ընտելության յերևույթների, մարդկանց և իր սեփական «յախ» հետ: Մարդու գիտակցության հենց սկզբից ել պատմական արդյունք լինելու հանգամանքը: Գիտակցության փոփոխումը տարբեր հասարակական ֆորմացիաներում: Ռասսայական ոեակցիոն տեսության դասակարգային բնույթը և այդ տեսության քննադատությունը:

Առաջագրութեան այս բաժինը մշակելիս, ամենից առաջ պետք է զբաղվել զարգացման յերկու կոնցեպցիաների ուսումնասիրմամբ: Այս աշխատանքը կատարելիս, պետք է առաջնորդվել ընկ. Լենինի «Դիալեկտիկայի հարցերի ընդունումով, տրված ընկ. Լենինի «Դիալեկտիկայի հարցերի շուրջը» գրվածքի մեջ, վորը հեռակայողը կգտնի ընկ. Լենինի «Մատերիալիզմ և էմպիրիոկրիտիցիզմ» (հ. 13-րդ) գրքի վերջի եջերում, տրված իբրև հավելված: (հայեքներ տես Լենին—Ընտիր յերկեր, հատոր 6-րդ): Փիլիսոփայութեան հիմունքների հետ ծանոթ չլինողի համար վորջ գրվածքի մշակումը դժվար կլինի: Այդ պատճառով էլ հիմնական ուշադրութեանը պետք է կենտրոնացնել զարգացման յերկու կոնցեպցիաների ընդունման վրա:

Խիստ անհրաժեշտ է նաև ծանոթանալ ընկ. Ստալինի 1906—1907 թվերին գրած տեսական մի շարք հոդվածների քաղվածքների հետ, վորոնք բերված են ընկ. Բերիայի հանրածանոթ գեկուցման մեջ (Լ. Բերիա—Անդրկովկասի բուլեկկյան կազմակերպութեան յատմութեան հարցի շուրջը» էջ 97—104):

Կենդանիների հոգեկան զարգացման աստիճանների հետ ծանոթանալու համար պետք է մշակել Ռուբինշտեյնի «Հոգեբանութեան հիմունքները» ուսերեն գրքի համապատասխան գլուխը: Վորոշ գաղափար հատկապես բնագիտության և հաստատությունների մասին կարելի չէ ձեռք բերել նաև Կորնիլովի հոգեբանութեան դասագրքից:

Մարդկային գիտակցութեանը թեման մշակելիս պետք է առաջնորդվել Մարքսի և Ենգելսի «Դերմանական իդեոլոգիա» գրքով (ուսերեն լեզվով, հրատ. 1935 թ., էջ 10—12 և 16—18), ինչպես և Մարքսի թեգիտներով Ֆեյերբախի մասին (տպված է իբրև հավելված Ենգելսի «Լյուդվիգ Ֆեյերբախ» գրքում: Կա հայերեն թարգմանութեանը):

Այս աշխատութեաններին կվերադառնա հեռակայողը հաճախակի, հոգեբանութեան ամբողջ կուրսը մշակելիս: Առաջին անգամ ընթերցելիս պետք է հատուկ ուշադրութեան դարձնել մարդու դաստիարակութեան ու հանգամանքների ծնունդ լինելու վրա, ընդգծելով միջավայրը

մարդու ձեռքով փոխելու և դաստիարակողին իրեն դաստիարակելու հանգամանքը: Կարևոր են նաև այն սողերը, վորոնք բնորոշում են գիտակցութեանը և տալիս են մարդու և կենդանու հոգու տարբերութեանները:

Այս թեմայի մասին առկա պարամունքների ընթացքում կարվի մանրամասն դասախոսութեան:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՀԱՄԱՐ

1. Զարգացման մետաֆիզիկական և դիալեկտիկական կոնցեպցիաների ելութեանը:

2. Ի՞նչն է տրոպիզմների ուսմունքը:

3. Տվեք բնագրի և նրա հիմնական հատկութեանների ընդունումը: Բնագրի գերը կենդանիների հոգեկան կյանքում:

4. Հիմնութեանները կենդանիների մեջ: Հիմնութեանների առաջացման ուղիները:

ՈՒՍՄՈՒՆՔ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոգեբանութեան առարկայի, մեթոդների և դիալեկտիկական մատերիալիզմի հիմնական սկզբունքների հետ ծանոթանալուց հետո, վորի վրա պետք է կառուցվի հոգեբանութեան վորջ կուրսը, պետք է անցնեն հոգեկան առանձին ֆունկցիաների ուսումնասիրութեանը: Ֆունկցիաներն արդեն հոգեկան կյանքի տարբեր կողմերն են, այն առանձնահատկութեանները, վորից բարդվում է հոգեկան ամբողջական կյանքը: Իհարկ է այս վերլուծողական աշխատանքը կատարելիս և մասի առանձնահատկութեանների հետ ծանոթանալիս յերբեք չպետք է աչքաթող անել այն, վոր մասն ամբողջ չի, չի փոխարինում ամբողջին, այլ ամբողջի մեջ մտնում է ընդհանուր գծերով, յենթարկվելով հոգեկան ամբողջական կյանքին՝ ֆունկցիան չի չեզոքանում, այլ պահում է նաև իր առանձնահատկութեանները:

Ցուցմունքներ և գրականութեան տրվում է ամեն մի գլխից հետո:

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ՈՒՍՄՈՒՆՔ ՖՈՒՆԿՑԻԱՆԵՐԻ ՄԱՍԻՆ

Հոգեկան կյանքի վերլուծական ուսումնասիրութեան նշանակութեանը: Հոգեկան պրոցեսներ և ֆունկցիաներ: Նրանց փոխադարձ կապն ու անքակտելիութեանը: Դիտա-

կան ուսումնասիրութեան նպատակով առանձին ֆունկցիաների պայմանական առաջադրումը: Դիտական վերլուծութեան խնդիրներն ու սահմանները:

Դիտակցութեան և հոգեկան ֆունկցիաներ: Առանձին ֆունկցիաների և նրանց կապի պատմական զարգացումն ու բարդացումը:

Այս բաժնի մասին հեռակայողները կլսեն հասուկ դասախոսութեան: Մասամբ կարելի չէ ոգտվել Կորնիլովի դասադրքից:

2. ԶԳԱՅՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԸՄԲՆՈՒՄ

Զգայութեան իբրև հոգեկան մասվոր կյանքի տարր: Նրա հարաբերականորեն պարզ լինելու հանգամանքը: Զգայութեան իբրև «բնության, իրերի և վարմիչների ազդեցութեան հետեանք» մեր զգայական օրգանների վրա» (Լենին):

Ըմբռնումն իբրև օբյեկտիվ սեղանականութեան արտացոլում փոխհարաբերութեան ընթացքում: Ըմբռնումներ և զգայութեան: Ըմբռնման առումական-մեխանիստական տեսութեանը, ըմբռնման կառուցվածքային (ստրուկտուր) տեսութեանը՝ մասի և ամբողջի փոխհարաբերութեան ըմբռնման պրոցեսում:

Զգայութեանների և ըմբռնումների անատոմո-ֆիզիոլոգիական հիմունքները: Զգայութեան օրգաններ: Պսիխոֆիզիկա: Գրգռման վերին և ներքին շեմը—Վեբեր-Ֆեխների օրենքը:

Պրակտիկայի չափանիշը և ըմբռնման ճշգրիտ լինելու հանգամանքը: Իլյուզիաներ:

Աշխատանքի դերն ըմբռնումների զարգացման մեջ, «հինգ զգայարաններն ընդհանուր պատմութեան արտադրանք են» (Մարքս):

Ըմբռնումների զարգացումը յերևանների մոտ: Յերեխաների ըմբռնման կառուցվածքի փոփոխութեանը մըտածողութեան զարգացման ընթացքում: Վաղ մանկական հասակում ըմբռնման դիֆուզ-կոմպլեքսային լինելու հանգամանքը: Սինկրետիզմը մանկան ըմբռնման մեջ և նախադպրոցական հասակում: Սինկրետիզմի հաղթահարումը և մասվոր բնույթի ըմբռնումների զարգացումը:

Ըմբռնման նշանակութեանը մանկավարժական պրոցեսում:

Զգայարանների կրթութեանը:

ՄԵԹՈԴԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ըմբռնումներ և զգայութեան յենթաթեմայի համար հիմնական աղբյուր և հանդիսանում Կորնիլովի ձեռնարկը: Բայց միայն Կորնիլովով բովարարվել չի կարելի: Ռուսերեն իմացողները պետք է ոգտվեն պրոֆ. Ռուբինշտեյնի «Հոգեբանութեան հիմունքները» գրքից: Լավ կլինե՞ր ճարել և ոգտագործել ընկ. Մազմանյանի կազմած № 3 առաջադրութեանը*):

Տեսական-մեթոդոլոգիական հիմունքների հետ ծանոթանալու համար պետք է կարդալ ընկ. Լենինի «Մատերիալիզմ և եմպիրիոկրիտիցիզմ» գրքի «Նախաբանի փոխարեն»-ը և 3-րդ գլուխը (Լենին—ընտիր յերկեր, հատոր 6-րդ):

Այս գլխի մեթոդոլոգիական-փիլիսոփայական մասը կպարզարանվի ամառային պարապմունքների ընթացքում, ինչպիսի և կցուցադրվեն վորոշ փորձեր:

3. ՈՒՇԱԴՐՈՒԹՅՈՒՆ

Ուշադրութեան բնութագրումը: Ուշադրութեան և ըմբռնում: Ուշադրութեան և դիտողութեան, մասնողութեան ու գործողութեան: Հետաքրքրութեան և ուշադրութեան, ուշադրութեան և կամք: Կամք և ահամա ուշադրութեան: Ուշադրութեան կայունութեանը և նրա առաջանումները տարբեր պայմաններում: Ուշադրութեան ծավալը: Ուշադրութեան բաժանումը և ցրվածութեան: Դոմինանտի տեսութեանը: Ուշադրութեան առանձնահատկութեանները տարբեր հասակային շրջաններում: Ուշադրութեան բարձրացման պայմանները: Ուշադրութեան վրա վատ ազդող

*) Ընկ. Մ. Մազմանյանի այս և հաջորդ եջերում նշվող առաջադրութեաններն անցյալ տարվան են և կարելի չէ գտնել անցյալ ուսումն. տարվա 1-ին կուրսի ուսանողների մոտ: Վերահիշալ առաջադրութեանների կրկնահարադրականութեան չի նախատեսվում:

պայմանները (հիվանդություն, քաղցած վիճակ, հոգնածություն, անքնություն, հոգեկան ճնշվածություն):

Ուշադրության դերը մանկավարժական պրոցեսում:

Ուշադրության կրթությունը:

ՄԵՔՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՑԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Ուշադրության ֆունկցիան ուսումնասիրելիս պետք է ոգտագործել Կորնիլովի հոգեբանության դասագիրքը: Գրավոր աշխատանք ներկայացնելիս լավ կլինի ոգտագործել և այս թեման, փորձառու ուսուցիչն ինքնուրույն շատ բան կարող է ասել ուշադրության մասին:

ՀԱՐՑԵՐ ԿՐԿՆՈՂՈՒԹՅԱՆ ՑԵՎ ԻՆՔՆՍՏՈՒԳՄԱՆ ՀԱՄԱՐ

1. Ուշադրության տեղը և դերը հոգեկան կյանքում:
2. Ուշադրության գործունեության հիմնական որոնքները:
3. Ուշադրության ֆիզիոլոգիական հիմունքները:
4. Ուշադրության հիմնական տեսությունները:
5. Նրա զարգացման աստիճանները:
6. Յերեխայի ուշադրության առանձնահատկությունները:
7. Լավ ըմբռնելու պայմանները:
8. Ուշադրության կրթությունը:

4. Հ Ի Շ Ո Ղ Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հիշողության բնորոշումը: Վերարտադրում և ճանաչում: Հիշողության դերը կենդանիների և մարդկանց կյանքում: Հիշողություն և մտապատկերներ: Հիշողության ֆիզիոլոգիական հիմունքները: Մեխանիցիզմը և իդեալիզմը հիշողության բացատրման մեջ: Ակամա հիշողություն և մեխանիկական հիշողություն: Հիշողության զարգացման և կառուցվածքային տեսությունների քննադատությունը:

Ելդետիկական պատկերացումներ: Մեխանիկական և տրամաբանական հիշողություն: Հիշողության զարգացումն իրեն անցում մեխանիկական անմիջական տպավորություններից դեպի վերացական և տրամաբանական վեր-

նուշի: Այդ պրոցեսի պատմական աստիճանները: Յերեխայի հիշողության առանձնահատկությունները և դրա պատճառները: Հիշողության նշանակությունը մարդու կյանքում և հասկապես ուսուցման ընթացքում: Մոռացումը և նրա բխող գիական նշանակությունը: Հիշողության արհեստական դարգացումը: Լավ հիշելու պայմանները:

ՄԵՔՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՑԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Բացի հիմնական աղբյուրից, այն ե՞ պրոֆ. Կորնիլովի դասագրքից, հեռակայողներն անպայման պետք է մշակեն ընկ. Գ. Եղիլյանի կազմած և Պետհրատի հրատարակությունը լույս տեսած «Հիշողություն» բրոշյուրը:

Այս յենթաթեմայից գրավոր աշխատանք կատարելիս լավ կլինի չծավալվել, այլ վերցնել միայն մի փոքրիկ բաժին (հիշողության դերը, փոքրի հիշողությունը և այլն) և մանրակրկիտ կերպով մշակել, ոգտագործելով ուսուցչական փորձն ու դիտողությունները: Կարելի չէ ոգտագործել և պրոֆ. Ռուբինշտեյնի բաղմիջս նշված դասագիրքը:

Հարցեր կրկնողաբայան յեվ ինֆնսուզման համար

1. Հիշողության բնորոշումը:
2. Հիշողության նշանակությունը:
3. Հիշողություն և ըմբռնում:
4. Հիշողության ֆիզիոլոգիական հիմունքները:
5. Ի՞նչ է զուգորդումը:
6. Մեխանիկական և տրամաբանական հիշողությունների տարբերիչ կողմերը:
7. Յերեխայի հիշողության առանձնահատկությունները:
8. Լավ հիշելու պայմանները:

5. Ց Ե Ր Ե Վ Ա Կ Ա Ց Ո Ւ Թ Յ Ո Ւ Ն

Հասկացողության վերարտադրական և ստեղծագործական յերեակայության ելություն ու առանձնահատկությունների մասին: Յերեակայության կապը հիշողության ու փորձի հետ: Յերեակայության նշանակությունը մարդու կյանքում: Յերեակայության մասնակցությունն աբստրակ-

ցիայի և ընդհանրացումների մեջ (Լենինը «Իրականություններից թուրք կատարելու» և «Երեվակայություն մասնիկն ամենահասարակ ընդհանրացման մեջ»։ Այս տեսակետից յերեվակայություն զարգացման հարցի լուծումը։ Ստեղծագործական յերեվակայություն ընտրողում ու իրականություն չափանիշը։ Յերեվակայություն տեսությունները։ Յերեվակայության ֆիզիոլոգիական հիմունքները։

Յերեվայի յերեվակայություն առանձնահատկությունները։ Իրականության չափանիշը յերեվայի յերեվակայություն մեջ, կոնկրետություն ու փորձի պակասությունը։ Արտարկտ յերեվակայության զարգացումը, յերեվայի մտավոր կյանքի զարգացման հետ միասին։ Յերեվակայությունը և մանկավարժական պրոցեսը։

Յերեվակայության կրթությունը։

ԱՅԹՈՂԱԿԱՆ ՑՈՒՑՄՈՒՆՔՆԵՐ ՅԵՎ ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ

Այս յենթաթեմայի համար էլ հիմնական աղբյուրն առայժմ մնում է Կորնիլովի հոգեբանություն ձեռնարկը։ Ռուսերեն իմացողներն անպայման պետք է ոգտագործեն պրոֆ. Ռուբինշտեյնի գտաագիրքը։ Հնարավոր է ոգտվել նաև ընկ. Մ. Մազմանյանի կազմած առաջադրությունից։

Այս յենթաթեմայից գրավոր աշխատանք ներկայացնելիս լավ է վերցնել առանձին խնդիրներ («մեծի և փոքրի յերեվակայությունը», «յերեվակայություն և հիշողություն», «յերեվակայության զարգացումը» և այլն)։

Հարցեր կրկնողության լեվ ինֆլուենցիան համար

1. Յերեվակայության ընտրողումը, նրա կապը հոգեկան ալլ ֆունկցիաների հետ։
2. Յերեվակայության դերն ուսուցման և ստեղծագործություն պրոցեսում։
3. Յերեվակայության կրթությունը։

6. ԽՈՍԲ ՅԵՎ ՄՏԱԾՈՂՈՒԹՅՈՒՆ

Խոսքն իբրև հաղորդակցության միջոց։ Խոսքն իբրև մտածողության գործիք—առարկայի փոխանորդ։ Խոսք և լեզու։ Աշխատանքը և հարաբերություն կարիքն իբրև անհրաժեշտ պայման, լեզվի ծագման համար։

«Լեզուն նույնքան հին է, քան և գիտակցությունը։ Լեզուն գործնական, ուրիշ մարդկանց համար գոյություն ունեցող, նշանակում է ինձ համար նույնպես գոյություն ունեցող սեղ գիտակցություն է, և լեզուն, գիտակցության նման, ուրիշ մարդկանց հետ հաղորդակցություն ունենալու կարիքից է առաջանում։ Իմ վերաբերումը դեպի իմ շրջապատն իմ գիտակցությունն է»։ Մի ալլ տեղ Մարքսն ասում է. «Լեզուն մտքի անմիջական իրականությունն է» (Գ. Մարքս, յերկերի ժողովածու, հատոր 1, էջ 23, 1923 թ. ռուս. հրատ.)։

Կենդանիների լեզվի աֆֆեկտիվ-որդանական բնույթը։ Ազդանշաններ և նմանություն։ Արտահայտիչ շարժումները կենդանիների և մարդկանց մոտ։ Հնչյունային խոսքի առաջացումը մարդու մոտ։ Խոսք ու համբերի լեզուն։ Լեզվի պատմություն։

Մ ա ժ ո ղ ո յ ա ն բ ն ո ղ ու մը.—Մտածողությունն իբրև իբրի ու առարկաների փոխադարձ կապակցությունների յերեան հանումն արտարակցիայի միջոցով։ Որչեկտիվ դիալեկտիկա և սուբյեկտիվ դիալեկտիկա։ Արտարակցիայի կյանքը։ Մտածողության բնթացքը կոնկրետից դեպի ընդհանուրն առանց իրականությունից հեռանալու և ապա վերադարձը դեպի կոնկրետը։

Խոսք և մտածողություն. նրանց գենետիկական միարմատից՝ աշխատանքից առաջ յեկած լինելը։ Խոսքի և մտածողության միասնությունը, բայց վոչ նույնությունը։ Մտածողությունն իբրև ուղեղի ֆունկցիա։ Մտածողությունն իբրև հոտարակական պրակտիկայի տարր։

Մտածողության նախազրյալները կենդանական աշխարհում։ Խոսքի և գիտակցության պատմական զարգացումը։ Պրիմիտիվ խոսք և մտածողություն։ Վերաբերմունքը խոսքին իբրև լեզու։ Խոսքի կոնկրետ բնույթը։ Խոսք—հանկացողության առաջացումը։ Նախամարդու մտածողությունը։ Կոնկրետություն, սինկրետիզմ։ Մինկրետիզմն իբրև պրակտիկայի ցածր աստիճանի արտահայտություն։ Խոսքը և մտածողությունը դատարկության հասարակու-

թյան մեջ: Գրական լեզվի առաջացումը: Գաղափարներով մտածելու ծավալումը: Ներքին խոսք, նրա ելությունը, նրա տարրերով թյունը վերբալ խոսքից:

Մտածողության հիմնական ձևերը: Պատկերացումներ և հասկացողություններ: Դատողություն և մտայնաբանական: Գաղափարների առաջացումը: Գաղափարների յուրացումը մարդկային պրակտիկայի ընթացքում: Անցումն ընթացումից դեպի մտածողություն և մտածողությունից դեպի պրակտիկա:

Խոսքի և մտածողության զարգացումը յերեխաների մոտ: Յերեխայի խոսքի տեսությունների քննադատությունը (Պրաժե, Շտերն): Յերեխայի խոսքի սոցիալական բնույթը: Խոսքի միջոցով նախորդ սերունդների փորձին տիրապետելը: Յերեխայի խոսքի ինքնուրույն — անհատական զարգացման տեսության քննադատությունը: Պոլիտեխնիկ ուսուցումն ու գաղափարներով մտածելու ունակության զարգացումը: Տրամաբանորեն մտածելը: Պրակտիկան և տեսական մտածողությունը:

Յերեխայի մտածողության կոնկրետ բնույթը զածր հասակներում: Այս հասակում վերացական գաղափարների դժվար հասկանալը: Յերեխայի մտածողության մյուս առանձնահատկությունները

ԳՐԱԿԱՆՈՒԹՅՈՒՆ ՅԵՎ ԴԻՏՈՂՈՒԹՅՈՒՆՆԵՐ

Դնքնուրույն կերպով խոսքի և մտածողության թեման դժվար և մշակելի ի մի բերող աղբյուրների բացակայության պատճառով: Կորնելովի դասագրքում յեղած նյութը միայն շատ հարեվանցիորեն ու ընդհանուր կերպով և ծանոթանում խոսքի և մտածողության ելության հետ: Շատ հարցերի պատասխանը հեռակայությամբ Կորնելովի դասագրքում չի գտնի: Անհրաժեշտ և մշակելի նաև պրոֆ. Ռուբինշտեյնի դասագրքի այս գլուխը: Դասագրքեր չձայնելու կամ ուսանողներից ոգովելի չկարողանալու պատճառով կարելի չի ոգովելի ընկ. Մ. Մաղմանյանի կազմած առաջադրությունից (խոսք և մտածողություն):

Այս թեմայի մասին ևս հեռակայությամբ կլս ծավալուն գոստխոսություն:

Հարցեր՝ կրկնողության համար

1. Մտածողության դերը մարդու հոգեկան կյանքում.
2. Արտարկեցիկայի ելությունը.
3. Ի՞նչ և խոսքը.
4. Կենդանիների և մարդու մտածողությունը.
5. Նախնական մտածողություն.
6. Մտածողության հիմնական ձևերը.
7. Յերեխայի մտածողության առանձնահատկությունները:

7. Ե Մ Ո Ց Ի Ա Ն Ե Ր

Եմոցիաների բնույթը և նրանց բնորոշ առանձնահատկությունները: Եմոցիաների տարբեր տեսակները: Զգացմունք, աֆֆեկտներ, կերք: Եմոցիաների ֆիզիոլոգիական հիմունքները: Եմոցիա և արտահայտիչ շարժումներ (Գարվին): Եմոցիաների հոգեբանական տեսությունները: Զևմա-Լանգեյի տեսության քննադատությունը: Ինտելեկտուալ, եստետիկ և բարոյական եմոցիաներ:

Եմոցիաների զարգացումը յերեխաների մոտ և նրանց զգացմունքների առանձնահատկությունները:

Գրականություն

Հիմնական աղբյուրը Կորնելովի դասագրքն է: Կուրելի յե ոգտադործել նաև Մ. Մաղմանյանի կազմած առաջադրությունը: Ռուսերեն իմացողները պետք է մշակեն պրոֆ. Ռուբինշտեյնի դասագրքերը:

9. Կ Ա Մ Ք

Ի՞նչ և կամքը: Կամքի բնորոշ կողմերը: Կամքի հիմնական տեսությունները՝ ինտելեկտուալ, եմոցիանալ և վոլյանտարիստական: Կամային գործողության հոգեբանական անալիզը: Մոլաների և հմտությունների դերը կամային գործողության մեջ: Կամք և մտածողություն: Աշխարհահայացքի դերը կամքի ձևավորման գործում: Կամք և անհատականություն: Կամային գործունեությունից տիրապելը: Կամք և ներշնչում:

Յերեխայի կամքի առանձնահատկությունները: Կամքի դաստիարակումը:

Վրականություն

Կորնելովի դասագիրքը տալիս է բավարար հասկացողություն կամքի մասին: Իբրև լրացուցիչ վրականություն, հանձնարարվում է Պուբլիշաների «Հոգեբանության հիմունքները» սուսերեն գիրքը:

ՀՀ Ազգային գրադարան



NL0936527

97

7 MAR 1937

ԳԻՆԸ 70' 4.

11

28016